



Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՄՊԸ տնօրեն

Լ. Մեհրաբյան

« 04 » 07 2022 թ.

ԿԱՐԳ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍՏԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգով սահմանվում է «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՄՊԸ բժշկական քոլեջում (Այսուհետ՝ Քոլեջ) կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ու դրանց համապատասխան գնահատման մեթոդների ընտրության ընթացակարգը:
- 1.2. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների և «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՄՊԸ կանոնադրության հիման վրա:

2. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

- 2.1. Քոլեջի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդի ընտրությունն իրականացվում է ըստ վերջնարդյունքի տիպի (գիտելիք, հմտություն, կարողություն):
- 2.2. Կրթական ծրագրի և դասընթացների ծրագրերի վերջնարդյունքների տիպը որոշվում է ՈԱՇ-ով (Որակավորումների ազգային շրջանակ) սահմանված բնութագրիչներին ու տիպերի նկարագրերին համապատասխան (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

№	Վերջնարդյունքի տիպը	ՈԱՇ V մակարդակի բնութագրիչը	Պարզեցված նկարագիր
1	Գիտելիք	<ul style="list-style-type: none"> • Հիմնարար, համակողմանի փաստական, տեսական և մասնագիտացված գիտելիքներ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտից • Մասնագիտության հիմնարար հասկացությունների, տեսությունների և մեթոդների իմացություն 	<p>Գիտելիքը տեսություններին, գործիքներին, մոտեցումներին, մեթոդներին, օրինաչափություններին, հասկացություններին ծանոթ լինելը և հասկանալն է:</p> <p>Այն ձեռք է բերվում տեղեկությունների հաղորդման, բացատրման, ընդունման, քննարկումների միջոցով:</p> <p>Գնահատվում է հասկանալը և իմանալը:</p>

2	Հմտություն	<ul style="list-style-type: none"> • Բազմակողմանի, համապարփակ, իմացական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. <ol style="list-style-type: none"> 1. տարաբնույթ, այդ թվում մասնագիտական, խնդիրներ բացահայտելու համար, 2. առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: • Հաղորդակցման և S2S հմտություններ, որոնք անհրաժեշտ են. <ol style="list-style-type: none"> 1. Մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, հասկացությունները, խնդիրները և դրանց լուծումները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար: 2. Մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու համար: 3. Մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալները հավաքագրելու, մշակելու և վերլուծելու համար: 	<p>Հմտությունը տեղեկությունների ընկալման, մշակման և եզրահանգումներ անելու, պատասխան գործողություններ մշակելու հաստատված ունակությունն է:</p> <p>Գործնական հմտությունը մասնագիտական գործունեության շրջանակից բխող գործողություններ իրականացնելու հաստատված ունակությունն է:</p> <p>Այն ձեռք է բերվում փորձի միջոցով:</p> <p>Գնահատվում է եզրահանգումներ անելը և պատասխան գործողություններ մշակելը:</p>
---	------------	---	---

3	Կարողություն	<ul style="list-style-type: none"> • Որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն: • Մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու, ամբողջության մեջ դիտարկելու կարողություն: • Ինքնավար միջավայրում ստացած գիտելիքների, մեթոդների արդյունավետ օգտագործման կարողություն: 	<p>Կարողությունը կարիերայի պահանջներից բխող գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձևավորման ունակությունն է:</p> <p>Գնահատվում է գիտելիք և հմտություն ինքնուրույն ձևավորելը:</p> <p>Գնահատվում է ինքնուրույն աշխատանքների միջոցով:</p>
---	--------------	---	---

3. ՎԵՆՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳԱՆՀԱՏՈՒՄԸ

- 3.1. Դասընթացի շրջանակներում կիրառվող գնահատման համակարգը պետք է ներառի գնահատման մեթոդները, չափանիշները, չափորոշիչները, ձևերը:
- 3.2. Դասընթացի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդները պետք է ուղղված լինեն դասընթացի ծրագրով նախատեսված բոլոր վերջնարդյունքների ընթացիկ և վերջնական ձևավորվածության մակարդակի գնահատմանը՝ չսահմանափակվելով միայն գիտելիքի ստուգմամբ, դրա պարզ վերարտադրության միջոցով:
- 3.3. Դասընթացի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդներն ընտրվում են՝ ըստ սահմանված վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի և հետևյալ աղյուսակի.

№	Վերջնարդյունքի բաղադրիչը	Գնահատման մեթոդը
1	Գիտելիք	<p>Գնահատվում է իմանալը, հասկանալը:</p> <ul style="list-style-type: none"> – Գիտելիքն իմանալու և հասկանալու ստուգում է բանավոր կամ գրավոր վերարտադրմամբ: – Գիտելիքն իմանալու և հասկանալու ստուգում է բազմընտրանքային թեստերով: – Գիտելիքի ստուգում ռեֆերատների միջոցով: – Գիտելիքի ստուգում քննարկումների միջոցով:

2	Ընդհանրական հմտություն	<p>Գնահատվում է եզրահանգում-ներ անելը և պատասխան գործողություններ մշակելը:</p> <ul style="list-style-type: none"> - Տեղեկությունների մշակման արդյունքում եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում, իրավիճակային խնդիրների լուծման հիման վրա: - Տեղեկությունների մշակման արդյունքում եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում, դերային խաղերում դրսևորած արդյունքների հիման վրա: - Տեղեկությունների մշակման արդյունքում եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում, իրական և պայմանական իրավիճակներում սահմանափակ տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա: - Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում, իրական և պայմանական իրավիճակներում հասանելի տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա:
3	Գործնական հմտություն	<p>Գնահատվում է գործողություն իրականացնելը.</p> <ul style="list-style-type: none"> - Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում, իրավիճակային խնդիրների լուծման հիման վրա: - Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում, դերային խաղերում դրսևորած արդյունքների հիման վրա: - Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում, իրական և պայմանական իրավիճակներում սահմանափակ տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա: - Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում, իրական և պայմանական իրավիճակներում հասանելի տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա:

4	Կարողություն	<p>Գնահատվում է գիտելիք և կարողություն ինքնուրույն ձևավորելը:</p> <ul style="list-style-type: none"> - Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի շրջանակներում ինքնուրույն ձևավորած նոր գիտելիքի՝ թեմային համապատասխանության գնահատումը: - Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի շրջանակներում ինքնուրույն ձևավորած հմտությունների՝ թեմային համապատասխանության գնահատումը: - Ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության շրջանակներում ձևավորված նոր գիտելիքի և հմտությունների օգտակարության գնահատում:
---	--------------	--

3.4. Գնահատման յուրաքանչյուր մեթոդի գործադրում պետք է հիմնված լինի գնահատման նախապես սահմանված, գնահատողին և գնահատվողին հայտնի չափանիշների և չափորոշիչների վրա, որոնք պետք է բնութագրեն վերջնարդյունքի ձևավորվածության աստիճանը և համապատասխանեն գնահատման մեթոդներին: Գնահատման չափանիշներն այն գործոններն են, որոնք ենթակա են գնահատման (օրինակ՝ կատարած հետազոտության ինքնուրույնության աստիճանը, համապատասխան գրականության ուսումնասիրվածության աստիճանը և այլն): Իսկ չափորոշիչները տարբեր գնահատականների համար պահանջվող քանակական կամ որակական նշանակներն են՝ ըստ չափանիշների:

3.5. Գնահատման ձևը գնահատման գործընթացի կազմակերպման ձևաչափն է՝ բանավոր քննություն, գրավոր ստուգում, թեստեր և այլն: Գնահատման ձևերը սահմանվում են կրթական ծրագրով և դասընթացի ծրագրով: Գնահատման ձևերը կարող են կազմակերպվել գնահատման մեկ կամ մի քանի մեթոդների գործադրմամբ:

4. ՎԵՐՋՆԱԲԵՑՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ուսումնառության մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման ծավալը որոշվում են ըստ դասընթացի վերջնարդյունքների: Եթե դասընթացի համար որպես վերջնարդյունք նախատեսված է գիտելիք, գործնական հմտություն և կարողություն, ապա անհրաժեշտ ժամանակ է պետք հատկացնել գիտելիք ձևավորող ուսումնառության մեթոդների կիրառմանը (դասախոսություն, մասնագիտական գրականություն), գործնական հմտություններ ձևավորող ուսումնառության մեթոդների կիրառմանը (դերային խաղեր, համապատասխան խնդիրների լուծում), տարբեր կարողությունների ձեռք բերման համար ինքնուրույն ուսումնառության մեթոդների գործադրմանը (աշխատանք ռեֆերատի վրա):

4.2. Ուսումնառության մեթոդների կազմը և ծավալը պետք է նախապես հայտնի լինի ուսումնառողին, իսկ անհրաժեշտ ուսումնական նյութերը (դասագիրք, ուսումնական ձեռնարկ, դասախոսությունների տեքստ) պետք է հասանելի լինեն: Դասընթացի շրջանակներում, ուսումնառության ընթացքում պետք է ապահովվի ուսումնառողի

հնարավորինս համաչափ բեռնվածություն՝ յուրաքանչյուր թեմայի համար նախապես սահմանված հանձնարարությունների միջոցով: Ուսումնառության մեթոդների լրացուցիչ գործադրման՝ անհատական առաջադիմությամբ պայմանավորված անհրաժեշտության մասին ուսումնառողը ևս պետք է տեղեկացվի դասավանդողի կողմից:

4.3. Դասընթացի շրջանակներում կիրառվող ուսումնառության մեթոդներն ընտրվում են ըստ սահմանված վերջնարդյունքների և հետևյալ աղյուսակի.

№	Վերջնարդյունք	Ուսումնառության ընդունելի տիպը
1	Գիտելիք	Ձևավորվում է տեղեկությունների ընդունման, հաղորդման, բացատրման, քննարկման միջոցով <ul style="list-style-type: none"> - դասախոսության ունկնդրում, - գրականության և ուսումնական նյութերի ընթերցում, - ուսումնական ֆիլմերի դիտում, - ընդունած տեղեկությունների քննարկում - ընդունած տեղեկությունների համակարգում և ներկայացում:
2	Ընդհանրական հմտություն	Ձևավորվում է փորձի միջոցով <ul style="list-style-type: none"> - իրավիճակային խնդիրների լուծում, - դերային խաղերի մասնակցում, - իրական և պայմանական իրավիճակների վերլուծություն:
3	Գործնական հմտություն	Ձևավորվում է փորձի միջոցով. <ul style="list-style-type: none"> - իրավիճակային խնդիրների լուծում, - դերային խաղերի մասնակցում, - իրական և պայմանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրում, - իրական և պայմանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրման փորձի ուսումնասիրություն:
4	Կարողություն	Ձևավորվում է ինքնուրույն աշխատանքի միջոցով. <ul style="list-style-type: none"> - անհատական կամ թիմային աշխատանքի ներկայացում, - ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության իրականացում:

5. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

5.1. Դասավանդման մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման նպատակադրված ծավալը որոշվում են՝ ըստ դասընթացի վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի: Դասավանդման մեթոդները պետք է ածանցվեն ուսումնառության մեթոդներից և դասավանդման ընթացքում ուսումնառողը պետք է անընդհատ գտնվի ուսումնառության գործընթացում: Ուսումնառության գործընթաց չենթադրող դասավանդումը կդիտարկվի որպես սույն կարգի խախտում. (օրինակ՝ թելադրությամբ դասախոսության տեքստ գրելիս ուսումնառողն ուսումնառության գործընթաց չի իրականացնում, հետևաբար՝ թելադրության տեսքով դասախոսության անցկացումը սույն կարգի խախտում է):

5.2. Դասավանդման մեթոդների կազմը և գործադրման նպատակադրված ծավալը պետք է նախապես հայտնի լինեն ուսումնառողին և դասավանդողին: Անհրաժեշտության դեպքում դասավանդման մեթոդները և դրանց գործադրման ծավալները կարող են ճշտվել:

5.3. Կիրառվող դասավանդման մեթոդներն ընտրվում են՝ ըստ սահմանված վերջնարդյունքների տիպի և հետևյալ աղյուսակի.

№	Վերջնարդյունք	Դասավանդման ընդունելի մեթոդները
1	Գիտելիք	<ul style="list-style-type: none"> – Դասախոսություն – գրականության և ուսումնական նյութերի հանձնարարում, – ուսումնական ֆիլմերի հանձնարարում, – ուսումնառողի ընդունած տեղեկությունների քննարկում ուսումնառողի հետ – ընդունած տեղեկությունների համակարգման և ներկայացման վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում:
2	Ընդհանրական հմտություն	<ul style="list-style-type: none"> – Իրավիճակային խնդիրների առաջադրում, – դերային խաղերի կազմակերպում, – իրական և պայմանական իրավիճակների վերաբերյալ տեղեկությունների ապահովում և դրանց վերլուծության վերաբերյալ հետադարձ կապի ապահովում: – հետազոտական հանձնարարությունների առաջադրում:
3	Գործնական հմտություն	<ul style="list-style-type: none"> – Իրավիճակային խնդիրների առաջադրում, – դերային խաղերի կազմակերպում, – իրական իրավիճակի հասանելության ապահովում և պայմանական իրավիճակների ստեղծում:
4	Կարողություն	<ul style="list-style-type: none"> – Ուսումնառողի կարիքներին համապատասխան անհատական կամ թիմային աշխատանքի հանձնարարում, – ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության վերաբերյալ հետադարձ կապի ապահովում:

6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

6.1. Ուսումնառության վերջնարդյունքներին դասավանդման, ուսումնառության և գնահատման համապատասխանության ապահովումը բաղկացած է հետևյալ փուլերից.

- մեթոդների ընտրություն,
- անհրաժեշտության դեպքում ընտրության հիմնավորում(երթե ընտրված մեթոդը սույն կարգով չի նախատեսված),
- ընտրված մեթոդների հաստատում,
- ընտրած մեթոդի գործադրում,

- համապատասխանության գնահատում,
 - անբաժեշտության դեպքում վերանայում:
- 6.2. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունն իրականացվում է դասընթացների ծրագրերի հեղինակների կողմից, համապատասխան առարկայական (ցիկլային) հանձնաժողովների նախագահների վերահսկողությամբ, քննարկվում համապատասխան առարկայական (ցիկլային) հանձնաժողովների նիստերում և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից:
- 6.3. Դասավանդվող մեթոդի գործադրման համար պատասխանատու է դասավանդողը: Սույն կարգին և համապատասխան ծրագրերին հակասող դասավանդման մեթոդի կիրառումը կարելի է դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարում կամ ծառայությունների ոչ պատշաճ մատուցում:
- 6.4. Ուսումնառության մեթոդների համար պատասխանատու է ուսումնառողը, սակայն դասավանդողը պետք է տեղեկացնի ուսումնառողին ուսումնառության նախատեսված մեթոդների և դրանց գործադրման ծավալների վերաբերյալ:
- 6.5. Գնահատման մեթոդների գործադրման համար պատասխանատու են.
- դասավանդողը՝ վերջնարդյունքների ընթացիկ ձևավորվածության գնահատման համար,
 - հանձնաժողովները՝ վերջնարդյունքների վերջնական ձևավորվածության գնահատման համար:
- 6.6. Սույն կարգին և համապատասխան ծրագրերին հակասող գնահատումը կդիտվի որպես աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարում կամ ծառայությունների ոչ պատշաճ մատուցում:
- 6.7. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների գործադրման վերահսկողություն իրականացվում է ցիկլային (առարկայական) հանձնաժողովների նախագահների, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի, որակի կենտրոնի կողմից՝ դասալսումների, հարցումների և այլ ձևերով:
- 6.8. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների վերջնարդյունքներին համապատասխանության գնահատման իրականացվում է ուսումնառողի, դասավանդողի, առարկայական (ցիկլային) հանձնաժողովների նախագահների, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի, որակի ապահովման կենտրոնի կողմից՝ դասընթացների արդյունքների գնահատման գործընթացների շրջանակներում: Ստացված արդյունքների հիման վրա կարելի է նախաձեռնել մեթոդների վերանայում:

7. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: